

Էր այսպիսի յիշատակներ ընել . միթէ բաւական չե՞ն մեղի խրատ ըլլալու մեր անցեալ չարիքը , որոնց դառն պտուղը ինչուան այսօր կը ճաշակենք . դեռ պիտի իշխէ այն կապուտակ նախանձը , իր մահացունչ վիշապէ գլուխը ։ այսոց ամէն պակսութիւններէն ալ վեր բարձրացընել , և իր քան զամէն կիրք անարդ , խիստ , և չարագործ բնութիւնը յայտնել . երբոր հապատութիւնը կը ջանայ ինք զինքն միայն բարձրացընել , այս ժամգոտ կիրքն պիտի ջանայ զուրիշները կործանել . այսչափ ամէն զիէ երեցած լոյսերու մէջ դեռ պիտի յանդգնի ։ Հնագունեղ նախանձը , կուրացընելու անքարեսէր միտքը , ինչպէս կը բողոքէր ։ աննա վարդապետը՝ անոնց դէմ որ յանիրաւի յլարպապացւոց խորշելով անոնց ամենէն իրաւ և սրբազնն բաներն ալ կ'արհամարհէին : Դեռ պիտի դողդողայ գողի պէս բարերարին ձեռքը տալու ատեն , և բարերարելոյն՝ առնելու ատեն , վախնալով որ ըրլայ թէ նախանձոտ աչք մը՝ այն սրբազն առաքինութեան մէջ ալ պատրուակ մը գտնայ իր չարութեանը : Դեռ պիտի կասկածին երկու սեղանաւորք մէկ տախտի վրայ նստած , երկու խոյրակիցք մէկ բարձի վրայ , երկու կարգաւորք մէկ աստիճանի , թէ ընկերնին զիրենք վարձգելու մասածմունք մը ունենայ :

Այսպիսի վախսեր և կասկածներ շատ չեռու են մեր ազգերնուա յառաջաղի մութեանը վրայ ունեցած յոյսերնէս և փափաքնէս . մանաւանդ երբ մէկ կողմէն կը տեսնամք օրինակով ալ՝ որ շատ տեղ հին նախանձը թուլացեր է , մնոտի խորութիւնները վերցուեր են , ազգասիրութեն ձայնը աշխարհքէ աշխարհք անցնելով՝ իր արձագանգը կը գտնէ , հարկաւոր խնդիրք և զիտելիք՝ իրարու միրով կը հաղորդուին , ու մէկ խօսքով շատ տեղ սկսեր է իմացուկիթէ մարդկութիւնը կը պահանջէ զազգասիրութիւն , որ է աննախանձ իրեն արենակցաց և լեզուակցաց բարիքը ուզել աւելի քան թէ օտարազգեաց , և անոնցմով զուարձանալ , ինչպէս որ իր բարիքը

կ'ուզէ և կը զուարձանայ : Բայց սակայն քանի որ մէկալ կողմէն ալ գեռ չեմք տեսնար կրթութեան ընդհանուր յառաջմունքը ամէն դաս մարդկանց մէջ , և ոչ հին կարծեաց բոլորովին վերցուին , և ոչ հասարակաց ջանք մը՝ ազգին յառաջաղիմութեան . և քանի որ մոքերնէս կ'անցնի , թէ երբոր ազգերնիս նախանձու պատճառաւ անցեալ դարերուն մէջ այնչափ թշուառ եղաւ և ետք մնաց , հապա ինչու այս դարուս մէջ ալ այնչափ առաջ չերթար՝ որչափ որ կրնար երթալ . ա՛հ , այն ատեն՝ չեմք կրնար արդարացընելնոր զիտուածներն ալ՝ այս ախտին բծէն , և չուզելով ալ իրաւունք մը կուգայ մեղի վախի և դողի , և այս համառու յիշելիքս թողլու ի մէջ աննախանձ ազգասիրաց և նախանձու ազգաւերաց . վասն զի ։ Ի մէն „ աննախանձ , կ'ըսէ իշիկար , կամբար ։ բեգործ կամբարեկամէ , ամէն նա , „ խանձու ալ կամբարագործ կամբար ։ բակամէ : Եւ որչափ է տարբերութիւն այսպիսի գործոց կամբարաց ։ մէջ ։ :

Հ . Դ . Մ

ԴԱՍՏԱՄԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞նք աղոյ նէւ հաբդալ սորվեցնելու նոր հերո հը :

Ո՞նք սարսանութիւն գիտնալուն ամենահարկաւոր ըլլալը ամենուն յայտնի է , անոր համար պզտիկուց կը ջանանք սորվիլ և սորվեցընել . տղաք և մանաւանդ մանր տղաք աս օգուտները ջանչնալով շուտով կը ձանձրանան երբոր թիւ կարդալ սկսին , և զրեթէ շատ անգամ անօգուտ կ'ըլլայ վարպետին ըրած ջանքը : Ծրդ այս բանս գիւրին և զուարձալի ընելու համար՝ մանր տղոց խաղակի պէս գործիք մը հնարուածէ , որ շատ կը զիւրացընէ իրենց թիւ կարդալուն ուսմունքը :

Դործին ամենապարզ է , քառակու-

սի շրջանակ մը չորս հաստ թելսվ կամ բարակ գաւազաններով զատուած հաւասար հեռաւորութեամբ , թելերուն վերի ծայրը վերին շրջանակին տակ մէկ մէկ ալ խորշ պէտք է շինել , կամ թէ թելերուն վերի մասը տուփերու մէջ ծածկել . այն ծածկած մասերուն վրայ պէտք է անցընել ամէն մէկին տաս տաս հաստ մանր գնտակներ . խորշերուն տակը պէտք է ծակ ըլլայ որ բացուի փակուի և ուզած ատենդ պղտի գնտակները թելերուն վրայ վեր վար քաշուի . Իս չորս խորշերս ձախ կողմէն երթալով դէպ 'ի աջ , առջինն է տուփ միաւորի , երկրորդը տամնաւորի , երրորդը հարիւրաւորի , չորրորդը հազարաւորի : Ա արագետը տղոց պիտի իմացընէ որ ձախ կողմէն սկսեալ առջի սիւնակին վրայ իմուզ գնտակները միաւոր թիւերը կը նշանակեն՝ մէկէն ինչուան ինը . այսպէս ալ երկրորդ սիւնակին վրայ իյնովները կը ցուցընեն տասնաւոր թիւերը ինչուան իննըսուն , և թէ նոյն է՝ միաւորի սիւնակին վրայ տասը գնտակ ձգելը , և տասնաւորին սիւնակին վրայ մէկ հատ մը , վասն զի տասնաւորի սիւնակին մէկ գնտակը , միաւորի սիւնակին տասը գնտակը կ'աժէ , նոյնպէս ալ հասկըցընել հարիւրաւորին և հազարաւորին ուժը : Իս սորվեցընելով , օրինակի համար երբոր ուզէ վարպետը կարգացընել տղոց այս տարուանս 1849 թիւը՝ կը ձգէ միաւորի սիւնակին վրայ իր խորշէն ինը գնտակ , տասնաւորի սիւնակին վրայ անոր խորշէն չորս հատ , հարիւրաւորին վրայ ութը , հազարաւորին վրայ մէկ . ասանկով տղաքը զուարձաննալով և զրեթէ խաղալով թիւ կարդալ կը սորվին . և քանի որ մոքերնին բացուի և վարժին՝ գործւոյն սիւնակիներն ալ կրնան աւելնալ՝ երկայն թիւեր ալ կարգալու համար :

Խոկ թէ որ մէկը այս գործւոյն աւելի պարզն ալ կ'ուզէ՝ ձախ ձեռքը բանայ բութ մասոր ամփոփելով ափին մէջ , գործին ձեացաւ . վերջը աջ ձեռքին երկու մասովն ալ օզակներ առնու զընտակներու տեղ՝ և վերի ըսած կամոնով

անցընէ ձախ ձեռքին չորս տնկած մատներուն վրայ , ու մանր տղոց սորվեցընէ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԽՀՔայրական սէր :

ԽՍՔԻԴԿՍ անուանի յօյն բանաստեղծը՝ պղտիկուց աւելի զինուորական վիճակի սէր ձգեր էր , որով մէկ քանի պատերազմներու մէջ ալ մտաւ ու քաջութեամբը շատ հուակուեցաւ : Իսյց վերջը ան ախորժը թաղով բանաստեղծութեան ետևէ եղաւ , որ աւելի բնութեանն ալ յարմար էր , որով անոր մէջ գերազանցեց և երեւելի եղերեզական բանաստեղծ եղաւ : Խսիկայ ամբատանուցաւ թէ իր զրուածոյը մէջ ուղղի բարոյական սկզբանց գէմք բան զըրած ըլլայ . անոր համար ատեան կամ չուեցաւ և աղէկ մը քննուելէն վերջը որոշեցին որ քարկոծուի : Խրբոր սահմանեալ օրը եկաւ որ պիտի քարկոծուէր՝ գահիձները բռնեցին զինքը ու բերին կեցուցին այն հրապարակը՝ ուր տեղ շատ անգամ զարմացուցէր էր Իթենքի ժողովուրդը իրեն անուանի թատրերութիւններովը :

Գիտուն և առաքինի մարդիկ կ'ողբային անոր մահուանը վրայ , բայց հասարակ ժողովուրդը կ'ուզէր որ շուտով կատարուի դատակնիքը : Խսկիղէս երբ որ տեսաւ թէ զահիձները պատրաստուեցան քարկոծելու , “ Ուրեմն պիտի մեռնիմ ըստաւ , այսպիսի վատահամբաւ տանջանքով մը .. : Իս ըսելրւն չմենաց՝ Իմինտաս իր եղբայրը վազեց հասաւ անոր քով . “ Քիչ մը կեցիք , ըստաւ , ուլ Իթենացիք , ու մոիք ըրէք ինձի : Խրբոր Վսելքսէս հարիւր հազար զօրքով Յունաց վրայ վազեց , յայտնի է որ ամէնքնիս ահճով գողով սարսափիցանք , բայց ան տասը հազար մարդը ովլ սուքի վրայ հանեց , որոնք կամք երենց կեանքը դրին հայրենեաց ազատութեան համար , կամ յաղթել և կամ